

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2023 թվականի

նոյեմբերի 22-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Կրթական ծրագրերի /փիլիսոփայություն, հոգեբանություն/ մշտադիտարկման զեկույցներ /զեկ. պրոֆ. Վ. Ռ. Պապոյան, դոց. Ս. Ս. Պետրոսյան/
ԿԾ-ի մշտադիտարկման գործընթացը սկսվել է 6-7 ամիս առաջ: Ծրագրի ղեկավարները ելույթ ունեցան իրենց զեկույցներով:
Երկու ծրագրերում էլ ուսանողների կողմից պրակտիկայի վերաբերյալ կային առաջարկություններ այն ավելացնելու: Հնչեցին տարբեր առաջարկներ՝ ըստ Վ Պապոյանի պրակտիկան կարելի է զուգորդել դասապրոցեսների հետ, դասերի ավարտից հետո: ԵՊՀ-ն ունի բավականին քանակով պայմանագրեր պրակտիկայի վայրերի հետ, որոնց քանակը կարելի է ավելացնել:
2. 2022-23 ուստարվա ռազմավարական ծրագրի կատարողականի մասին /զեկ. Ն. Ալավերդյան/
Ն. Ալավերդյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում նախատեսված գործառույթները կատարված են: Համագործակցելով ամբիոնների հետ, լուծվել են նաև ֆինանսավորումներ հետ կապված հարցերը, որի միջոցով կկազմակերպվեն գործուղումներ, տպագրություններ, էքսկուրսիաներ և այլն: Կազմվել է հաշվետվություն ռազմավարական պլանի վերաբերյալ զեկույց, որը կներկայացվի ԵՊՀ-ի գիտխորհրդի նիստում:
Ա. Բաղդասարյանը առաջարկեց այն տեղադրել կայքում, որպեսզի ծանոթանան և ուսանողները և դասախոսները:
3. Թեմաների հաստատում.
ա/ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի հայցորդ Արևիկ Հեբոյանի "Սպառողական որոշումների ընդունման էվրիստիկ կարգավորման առանձնահատկությունները բաժնետոմսային փոխանակման գործարքներում" թեմայի և գիտական ղեկավարի (հ. գ. թ. , դոցենտ Դ. Հայրապետյան) հաստատման հարցը:
բ/Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասպիրանտ Լիլիա Խաչատրյանի «Ճշմարտության հիմնախնդիրը հետճշմարտության դարաշրջանում» թեմայի և գիտական ղեկավարի (փ. գ. թ. , դոցենտ Ս. Պետրոսյան) հաստատման հարցը:

զ/ Անձի հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Էդիտա Առաքելյանի «Ուսանողների ներգրավվածությունն ակադեմիական միջավայրում. պայմանավորող գործոններն ու նշանակությունը հոգեբանական բարեկեցության համար» թեմայի և գիտական ղեկավարի (հ. գ. թ. , դոցենտ Ն. Խաչատրյան) հաստատման հարցը:

Ֆակուլտետի գիտխորհուրդը երաշխավորեց թեմաների հաստատումը և ղեկավարների նշանակումը:

4. Սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի կողմից ներկայացված «Քրեական արդարադատության հոգեբանություն և դատահոգեբանական փորձաքննություն» մագիստրոսական ծրագրի անվանման փոփոխման հարցը: Սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի վարիչ՝ Գ. Շավերդյանը ներկայացրեց նոր անվանումը, որը հաստատվեց նիստով. «Քրեական հոգեբանություն և դատահոգեբանական փորձաքննություն»:

5. Լսեցին Ընդհանուր հոգեբանության ամբիոնի 2 տարի տևողությամբ «Կառավարման հոգեբանություն» մագիստրոսական ԿԾ-ի 1,5 տարի դարձնելու հարցը:

Խորհուրդը երաշխավորեց այն, որի շարունակական ընթացքը կիրականացվի ըստ կարգի:

Նույն ամբիոնի կողմից առաջարկվեց ևս մեկ մագիստրոսական ծրագիր «Ռեզոնանսային հոգեբանություն», որը կլինի հեռակա ուսուցմամբ 1,5 տարի :

Խորհուրդը քննարկեց այն և մանրամասնեցին, թե ինչ նպատակով է այն արվում և ովքեր կարող են դիմել:

6. Ընթացիկ հարցեր:

- Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ԵՊՀ-ի կողմից նոր գործընթացի մասին. մագիստրոսների կամավոր ներգրավվածությունը, որպես պրոֆեսորի օգնական

- Հիշեցվեց նաև հեռակա ասպիրանտների ատեստավորման հարը, որը պետք է կատարվի նշված ժամանակահատվածում ամբիոնների կողմից:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ. Պապոսյան